ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
PRESIDENT OF THE CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՐԱՄ ԱՌԱՋԻՆԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ,

Երախտագիտությամբ ընթերցեցի Ձեր նկատառումները «Սահմանադրական մշակույթ» մենագրությանս առնչությամբ: Խորապես զգացված եմ Ձեր ուշադրության, խորիմաստ ընդհանրացումների ու քաջալերանքի համար:

Այս մենագրությունը տարիների տքնաջան աշխատանքի ծնունդ է: Ես մեծ հպարտություն ապրեցի, երբ այս տարվա հունվարի 26-ին Ստրասբուրգում մենագրության անգլերեն հրատարակության շնորհանդեսի ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը թերթելով գիրքը՝ բարձրաձայնեց, որ «սահմանադրական մշակույթը դառնում է հայկական բրենդ»: Այս իրողությունը մեր պատմության մեջ խոր արմատներ ունի: Մենք ոչ միայն այն օտարներին արժանապատիվ ձևով ներկայացնելու պարտականությունն ունենք, այլեւ ինքնաճանաչման ու սահմանադրական արժեքներով ապրելու հրամայականի գիտակցությամբ պետք է քաղաքակիրթ համակեցության կենսամիջավայրը դարձնենք մեր հայրենիքի առաջընթացի գրավականը:

Վեհափառ Տեր, ցանկանում եմ նաեւ Ձեզ տեղեկացնել, որ մեր ջանքերով, աշխարհի 18 երկրների թվով 40 ճանաչված սահմանադրագետների ու հանրային գործիչների հետ գործակցաբար, անցած տարվա վերջին հիմնադրել ենք «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոն /պաշտոնական ինտերնետ կայքն է. constculture.org /: 2017 թվականի նոյեմբերի վերջին նախատեսում ենք Հռոմի Պապական համալսարանի հետ համատեղ կազմակերպել միջազգային խորհրդաժողով՝ «Ժամանակակից անհատի հոգեւոր եւ իրավական վարքագծին նետված մարտահրավերները եւ դրանց դիմակայելու հիմնախնդիրները» թեմայով: Նախապատրաստական աշխատանքները հստակության հանգրվանի հասնելու պարագա-

10 M. Baghramyan av., Yerevan, 0019. Tel.: (374.10) 52 67 64, Fax. E-mail: armlaw@concourt.am.

յում Ձեզ լրացուցիչ կտեղեկացնեմ խորհրդաժողովի հրավիրման մանրամասների մասին:

Հավելեմ, որ խորհրդաժողովի շրջանակներում նախատեսվում է նաեւ կազմակերպել երկու կլոր սեղան՝ հետեւյալ թեմաներով.

ա/ Սահմանադրական մշակույթի դերը ժամանակակից անհատի հոգեւոր կերտվածքում,

բ/ Քրիստոնեական արժեքները ժամանակակից սահմանադրությունների արժեբանական համակարգում:

Խորհրդաժողովի եւ բոլոր քննարկումների նյութերը «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի կողմից կհրատարակվեն, ինչպես նաեւ կտեղակայվեն Կենտրոնի պաշտոնական կայքում:

Համոզված ենք, որ «Սահմանադրական մշակույթ» միջազգային մնայուն վերլուծական կենտրոնը՝ իր կանոնադրական նպատակների իրականացմամբ, կարճ ժամանակում կդառնա աշխարհում քաղաքակիրթ համակեցության հաստատման, մարդու սոցիալական արժեվորման, նրա հոգեւոր ու իրավական նոր վարքագծի կերտման՝ դրանց նետված մարտահրավերների հաղթահարման կարեւոր դրոշակակիրներից մեկը:

Կարծում եմ, որ ոչ միայն հոգեւոր դասի, այլեւ յուրաքանչյուր շիտակ մտավորականի պարտքն է օգնել մարդկանց ապրելու սիրով, հավատով ու հաշտությամբ, Աստվածային անանց արժեքների վրա կառուցեն իրենց երկրային գոյի կանոնները՝ դրանք դարձնելով քաղաքակիրթ համակեցության հենքը: Իսկ դա հնարավոր է միայն համարժեք սահմանադրական մշակույթի արմատավորմամբ, ինչին ժամանակակից աշխարհում լրջագույն մարտահրավերներ են նետված: Այդ մասին են վկայում նաեւ հայ ժողովրդի պատմական փորձը, չորրորդ դարից սկսյալ ազգային եկեղեցական ժողովների կողմից պարբերաբար ընդունված կանոնական սահմանադրությունների պատմական առաքելությունը, որոնք, Մովսես Խորենացու վկայությամբ՝ «...ողորմածությունը հաստատեցին Հայաստան աշխարհում»:

Կրկին անգամ շնորհակալություն եմ հայտնում գրքի առնչությամբ Ձեր արձագանքի ու արժեքավոր նկատառումների համար:

Լավագույն բարեմաղթանքով՝ Գ. Հարությունյան

08.02.2017թ.